

» 1892 «

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ե

ՄԱՐՏ

թ.

### ԱՅԽԱՐԱՅԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՓԱ

(Տէս յ՛էլ 26)



ԱՅՈՒԹԵԱՆ, ծաղկեալ միջոցն ի Ղրիմ՝ եղած է ի 1330—1475։ բազմաթիւ ձեռապիրք այն ժամանակաց մէջ գրուած են։ ամբակուր մատրունք և եկեղեցիք նոյն միջոցին կառուցել են։ շատ խաչքարինք նոյն ատեններ քանդակուած և կոփուած մինչև առ մեզ հասել են, իրենց յիշասակարաններով։ «Բարեխաւս են սուրբ նշանքս» այս կամ այն բարեպաշտ Հայուն, որ հեռի ի սիրելի հայրենեացն՝ կնքեր է յօտար պանդիստութեան իր կեանքը։ Քանի՛ սրտազին, հանոյական, միանգամայն և տիկրազին մոտածութիւնք չեն յարուցանել հայ սրտերու մէջ այդ սեւացեալ խաչքարինք, ոմանք եկեղեցեաց պատերուն մէջ ազուցած, այլք բարձր բերգերու պարսպաց վրայ։ Շատ անզամ ինձ պատահել է կանգ առնալ այգախիս խաչքարանց վիմաց, մանաւանդ Առտաղի գենուացի բերգին մեծ կրկնայարկ դրան ձախակողմեան որմին առաջ, ուր մեծ բարձրութեան վերայ, առանձնացեալ հայակոփ և հայքանզակ քար մի, վկայէ վեցհարիւր տարիներով յառաջ՝ այդ տեղուանք Հայոց դոյութեան, որ գենուացոց հետ աջակից՝ շինել են այդ աշտարակազարդ բերղը։

Մեր նպատակէն շեռանալու համար՝ կաֆայի վրայ ամփոփենք խօսքերնիւ։ ինչպէս 1475ին Թուրքաց կաֆայի տիրապետելու միջոց, նոյնպէս և անցեալ գալու վերջերը (1773) Ռուսաց ձեռք անցնելու պատերազմաց պատճառաւ՝

քարուքանդ եղած է կաֆա , մեծամեծ շէնքերը հիմնայտատակ , դռներուն և պատուհանայց շոշանակը և բարուսորք՝ իրու նիւթ լառելի կամ վառելափայտ գործածուած են բնակչաց , ամենեին ակնածութիւն շանելով ոչ ճարտարապետական ձևին և ոչ շէնքին հնութեան . և մինչդեռ այժմ , հարիւր տարի անցնելէն վերջ , ի հնութենէ մնացած կիսաեր ու զրեթէ անպէտ շէնքերու վրայ մասնաւոր հոգ և հսկողութիւն կը լինի կառավարութեան ու քաղաքապետութեան իննամօք , հարիւր տարի յառաջ , հարկ է խոտուղանիլ , անխնայ կերպով կործանուած և ոտնակոխ եղած են՝ քաղաքիս կարեւորագոյն և փառաւոր շէնքերը : Հաւանութեան է որ եթէտ անոնց յարգը չի ճանցող տղիւ ամբոխն և ոսմիկ՝ այլպէս անխնայ վարուած շինէին թէոգոսիոյ հին շինուածոց նկատմամբ , ո՞ զիսէ գեռ քանի՛ գեղեցիկ յիշատակար սնց կ'ունենայինք մեր ձեռքք , նոյն իսկ հայկական գաղթականաց պատմութեան մնասին Ավալյն յետ կրկին և կրկին կաֆայի աւերմանց , դարձեալ ասու և անք՝ մնացորդը հայրենի յիշատակաց քիշէն շաաը մեղ գուշակել կու տան , և գեղեցիկ վայելութեամբն զոր զեռ անկորուստ պահած են՝ կը քաշեն հնտագոտ հայ աշքերը :

Անշուշտ այդ մնացորդաց մէջ առաջին տեղին բռնողը ազգային եկեղեցիք են . զի ուր և լինի հայ ժողովուրդ , որպիսի՛ հանգամանաց մէջ ալ գտնուի , մինչեւ անգամ՝ ինցն երկրափոր նկուզներու մէջ ևս բնակի , կ'աշխատի որ Աստուծոյ տունը , կրօնքի ժողովարանը , եկեղեցին՝ գեղեցիկ և վայելուշ լինի : ի հնութենէ մնացած զեռ եւս կանգուսն կան կաֆայի մէջ երեք ազգային եկեղեցիք . Ա . Սարգիս , հին աթոռակալ եկեղեցի , ինչպէս կ'անուանեն և կը զբեն ազգային յիշատակարանք . — Ա . Հրեշտակապետք , որ մայր եկեղեցեաց կը համարուէր ինչուան վերջին տարիներու մէջ , — և Ա . կարապետ , որ այժմ ինուաց ձեռքն է : Այս երեք եկեղեցեաց վրայ եւս ցարդ յայտնի կ'երևի ազգային ճարտարապետութեան ճաշակ և վայելութիւն , և որք չեն կորուսած իրենց նախնական տիպարը . մինչ Ա . Գեորգ ի գերեզմաննատան , և Ա . Անեա ի սարին , վերջերս նորոգուելով , բոլորովին կորուսել են իրենց առաջին վայելութիւնը :

Ժ

Հին եկեղեցիք Հայոց . — Սուրբ Սարգիս .

Սրբոյն Սարգիս նուիրուած եկեղեցին , կաֆայի ազգայնոց հին և նոր եկեղեցեաց մէջ հնագոյնն է , քաղաքին կեզոն տեղին շինուած , և շատ ձեռագրաց մէջ , ինչպէս հիմայ ալ յիշատակեցինք , նշանակուած է իրք աթոռակալ կամ մայր եկեղեցի . ունի ընդարձակ բաւկ չորս կողմը , որոյ մի անկիննը քաշուած է եկեղեցին , յօյժ համեստ ձևով . և որպին եւս քաղաքին հրապարակին արևմտեան հարաւային կողմը կ'լինայ , այն պատճառու կարծես ինուլսէ , և կոնակ դարձուցած է զէպ ի քաղաք : Այդ բակին մէջ , ուր այժմ կայ որպայոց և աղջկանց համար ազգային ծխական ուսումնարան , հին ատեն , ըստ ազգիս սովորութեան , վանք և բնակութիւն եղած է արեգայից և վարդապետաց , ուր

շատ արեղայր բազում՝ ձեռագրեր օրինակել են՝ ընդ հովանեաւ Ս. Սարգիս տաճարին :

Եկեղեցւոյն դիրքը և տեղը, հանգերձ ընդարձակ բակով, քաղաքին մէջ տեղ շինուած, յայտնի ապացոյց են որ այս եկեղեցիս Գենուացւոց է թէոդոսիա գալէն առաջ շինուած է . վասն զի Ժի գարու հայ բազմաթիւ գաղթականութեան՝ Գենուացիք նշանակած են առանձին թաղ Հայոց, այժմեան արգելանոցին տեղը և անտի դէպ ի հարաւակողմեան սարերը . ուր և Հայր նոր պատ քաշելով իրենց բնակութեան չորս կողմբ, ապահովել են զիրենք ընդդէմ թշնամեաց յարձակման . բացի ի Ս. Սարգսէ միւս այլ եկեղեցիք, բոլորը կամ այդ պարապածին մէջն եղել են, և կամ պարսպէն եւս դուքս, այլ ոչ քաղաքին կեզրոն տեղը :

Այս եկեղեցին հաւանական է որ յընթացս ովհ հարիւր տարիներու՝ շատ անգամ նորոգւելով, այլայլութիւններ կրած է, այլ վիճաւոր մասն եկեղեցւոյն՝ բեմն և դաս, նոյն հին ձեռով մնացել են, ոչ միայն ներքին կողմէն, այլ նոյնպէս և արտաքին տեսքով: քանզի դրսէն եկեղեցւոյս պատին վրայ առացած քանի մի խաչքարինք՝ բոլորուին մաշուած են օվէն և անձրեներէն, և որոց վրայի տառերը սրբուած, որ մեծ հնութեան նշան է: Հայոցմէ վերջ գենուացիք, ոտից կսուան գտնելով, կամ լաւ եւս՝ տիրանալով կաֆայի, Ս. Սարգսի անմիջապէս մօտ, քաղաքին մեծ հրապարակին միջալայրը կը շինեն իրենց փառահեղ մայր եկեղեցին, ի պատիւ Ս. Ագնէս կուօփին, որ ըստ վկայելոց պատմագրաց, իր գեղեցիկութեամբ նշանաւոր եղած է ընդ համօրէն Եւրոպա: հաւանական է որ՝ նախ քան զգենուացիս, Յոյնք նոյն հրապարակին վրայ ունեցել են իրենց եկեղեցին: յետ Գենուացւոց թուրքը գմբէթազարդ և փառաւոր մղիմիթ կանգնել են Ս. Ագնէս եկեղեցւոյն հիման վրայ, նայն տաճարին աւերակներով . իսկ մեր օրեր՝ Ռուսը՝ ճիշդ այդ մղկիթին տեղ, հին եկեղեցւոյն հիման վերայ շինեցին իրենց մայր եկեղեցին:

Ինչպէս տեսանք՝ ի հոգովել զարուց և ի փոփոխիլ տիրապետող ազգաց, եկեղեցւոյն տեղը բռնած է մղկիթ, և ապա գարծեալ տեղի առած է եկեղեցւոյ, քաղաքիս կեղրոնին վերայ. մինչդեռ նոյն միջոց ժամանակին՝ Հայոց բազմազարեան Ս. Սարգիս եկեղեցին կը մնայ իւր սեպհականութիւն, և մինչև ցայսօր կանգուն գրեամէն նոյն ձեռով ինչպէս ասկէ ութ հարիւր տարի յառաջ, Եկել են ի կաֆա կազարք և Սարմատացիք, Խոչազ և Գոման թաթարք, և այլն, քարոզանդ արել են քաղաքը իւր մեծամեծ շնչերով, այլ կարծես թէ քանզոլաց աշքէն վրիպել է սուրբ տաճարս իւր անփառունակ ձեռով. սուարաց աշքին անշան, այլ ազդիք մանաւանդ կաֆայեցի Հայկազանց համար յոյժ սիրելի և նըշանաւոր. և պէտք է որ միշտ այնպէս լինի՝ իր գարերէ ի վեր ունեցած հնութեամբ և արժանաւոր արռուակալ անուամբ անզափին ի հոսք : Անշուշանց շինողք տաճարիս, խոհական խորհրդով նախագուշակելով պազայ աւերմոննք և արկածք, զգուշացել են, ինչպէս յառաջ ալ կանփեցինք ըսել, խորանաց կամարները բարձրացընելու, ինչպէս այլ եկեղեցեաց. չունի եկեղեցիս երկնարերձ կաթու-

զիկէ՝ վեղարի ձեով, ինչպէս ունին յետաշէն եկեղեցիք: Առաջին գաղթական Հայք ի Թէ՛ղոդոհիա, քաղաքին մէջ տեղը, շրջապատեալ ընդառնակ բակով, քարաշէն պարսպաց մէջ շինել են ի ցածագոյն տեղով, խոնարհ սրբալպյորը, որպէս զի կարող լինին, առանձնացեալ յօտարաց, առանց աշքի գարնուելու, ժաղովիլ առլրդ տաճարին մէջ, կրուսեալ հայրենեաց սէրը նորդգելու, նախնի հարց և վարդապետաց լեզուով և հնագոյն արարողութեամբ իրենց յարգութիւնն ու գովարանութիւնը, օրտի և հոգոյ պիտոյքը, վիշտերը և ցաւերը հելլու և տարածանելու առաջի երկնաւոր թագաւորին, որ ամէն տեղէ, ամէն լեզով, իրեն դիմողաց ձայնը կը լսէ, կարեաց գարման կը տանի և պիտոյքը կը հոգայ աստուածախնամ սիրով սփոփելով, քաջալերելով և արտասուբը քաղցրացը-նելով:

Յանցեալ դարու (1787ին) ի Նոր Նախիջեւան գրուած ձեռագիր մի, Գիրք Ժողովածու<sup>(4)</sup> վերնազրով, ի միջի այլոց կը զրուցէ Ս. Սարգիս եկեղեցւայ համար.

« Սուբբ Սարգիս յոյժ մեծ ժամ է.

Նախնեաց մերոց հաստատեալ է,

Եկեղեցեաց աթոռակալ է » :

Յոյժ մեծ ժամ բացատրութիւնը շաբազնցութեամբ տրուած կ'երենայ այս եկեղեցւոյ. զի այժմ, այսն է ի վերջին նորոգմանն որ յամի 1888, թէպէտ և փոքը բացուցած է, այլ նորոգմանէն յառաջ ալ կարելի չէր այդ մակղիրով կոչել. այլ այս բացատրութենէ կարող եմք գուշակել թէ այլոց մեծութիւնն ո՛քափ պիտի լինի. սակայն և այնպէս՝ ոչ իր ձեռյն կամ գեղեցկութեան, այլ վաղմի հնութեանն համար, եկեղեցեաց աթոռակալ, կամ այժմեան բացատրութեամբ մայր եկեղեցի ճանշուած է մինչեւ ցառաջին Այբեւելեան պատերազմն Սեւաստոպոլի. այդ միջոց ժամանակին անտէր մնալով, և եկեղեցւոյն երկրորդ մասին առկին վնասուելով, տակա խարխուզ վիճակի մէջ ինկած, եթէ այդ մասին (1888) գերապատի խորէն Ծ. Վարդապետ Ստեփանէ հոգ շի տանէր, կամաց կամաց այդ հնաւանդ եկեղեցին եւս թէ՛ղոսիոց քառասուն կործանուած ազգային եկեղեցեաց կարգը պիտի անցնէր. այլ ժրաշնան փայթ վարդապետին և ազդայնոց, որպէս և օտարաց, առատ նորիստուութիւնը, վերանաս կործանմանէ մը և ի սպառսապու անշգութենէ ազատեցին այդ եկեղեցին:

Ներսի կողմէն երեք մասն կը բաժանուին ազգային եկեղեցիք կափայի. նախ թէմը իւր զասով, ուստի մի աստիճանով ցածագոյն կ'իջնէ ժողովրդոց կամ հաւատուացելոց կանգնելու անողը: Այս երկրորդ մասը ընդհանրապէս փոքր է. և այն պատճառու ամենայն եկեղեցիք ունին և երրորդ մասն մի, որ ինչպէս եկեղեցեաց ներքին կողմէն երեք գաներով բամնուած է եկեղեցւոյն թեմէն:

1 Եթէ չէմ սիալէլ, ձեռագրիս այս մասը որ Կաֆույի եկեղեցեաց վրայ կը խօսի, ընդունակուած է 1756 թուականին, նոյն քաղաքի մէջ գրուած Պատմութիւնն Աթի քաղաքի ի ձեռն Արքահամու ըաբունապէտի ձեռագրին, և պահուած է ի մատենագարանին Խմբածնի:

դասէն, նոյնպէս և արտաքին կողմէն բոլորովին զատ է նոյն շէնքէն, երդիքը ամելի ցածադցյն. և ժողովուրդը երդորդ բաժանման դռներէն միայն կարող են տեսնալ պատարագ և այլ արարողութիւնք: Այս երրորդ մասին կանոն կադմ անունը կը տրամակի. այլ արդեօք հին ժամանակն ևս այնպէ՞ս էր, կը տարակուսիմ. ինձ այնպէս կ'երեւի որ կաֆայեցի նախնի Հայկազունք, հասանադ քիստանէական սովորութեան համեմատ, բռն սրբալայրը, հասարակաց ժողովրդան կենալու տեղէն բաժնել են դռներով. այդ զգուշութիւնը ունեցել են՝ որ վինի օտար ազգէ անհաւատք կամ թերահաւատց անպատճութիւն մի հասցնեն սուրբ խորհրդց. անշուշու երդոր սարկաւագը մեղմիկ եղանակաւ ազդ կ'անէր զպրաց, «Զգորուն, զգորուն ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ» փակեցէք, զպիք երեք գոներն ևս վրայ կը բերէին սրբազործութեան միջոց ի սուրբ պատարապին, որով օտարաց հետ ի միախն և բազմութիւնք ազգայնոց եկեղեցւոյն երրորդ մասին մէջ կը սպասէին, մինչև երկրորդ անգամ դրները բացուելուն:

Ի թէկորսիա՝ Ս. Սարգսի, Ս. Հրեշտակապետք և Ս. Կարապետ. ի Հին Ղրիմ՝ Ս. Խաչ վանքի եկեղեցին բրորն ալ վերոզնեալ բաժանմունքով շինուած են. միայն այժմ Ս. Սարգսի եկեղեցւոյն այդ բաժանմունքը քանուած է, և փոխանակ հին դռներուն մեծ կամար մի կը բաժանէ եկեղեցին երրորդ մասին: Այդ նորածնութիւնը դարուս սկիզբները եղած է Ս. Սարգսի մէջ, որ թէպէտ ամէն կողմանէ վայելուչ, և ազատ տեսաք ունի խորանը, սակայն եկեղեցին իւր վաղեմի ձևը կորուսել է ներքին կողմէն, այս մասամբ: Նոյն միջոցին մոռածած են ազգայինք Ս. Հրեշտակապետաց եւս դռներուն բաժանմունքը մի մեծ կամարի վերածել. այլ բարեբազզաբար, ճարտարապետութիւնուրդ չէ առևել, որպէս զի կաթուզիկէն՝ և զայն վեր բռնող կամարները չի խախտին:

Վայելաձեւ են յոյժ Ս. Սարգսի երեք խորանաց ևս կամարները: Դիտելու արժանի է և այս, որ ազգային հին եկեղեցեաց ընծայարանները, երկու կողմէն խորանին դուրս են, և ոչ խաչկալին ետևէն. ինձ այսպէս կ'երեւի որ խաչկալին ետևը ընծայարան շինելը՝ Յունաց հետևողութեամբ մտած է նորաշէն ազգային եկեղեցեաց մէջ: Խորանին աշխալովմեան ընծայարանին անմիջապէս մօտ կը գանուի որմին մէջ շինուած մկրտութեան աւագանը, ինչպէս որ կը պատուիրէ Ս. Սահակ հայրապետիր կանոնաց մէջ: Փոքը վարագուրի սովորութիւնն ամէն հին եկեղեցեաց վերայ կ'երեւի, այժմ միայն դավրած է ոմանց եկեղեցեաց մէջ, ըստսաստանի մի քանի քաղաքներուն, որ կամայականութիւն է, և ոչ ըստ ազգային արարողութեան:

### Ս. Հրեշտակապետք

Այժմ՝ Ս. Հրեշտակապետք համարուած է զինաւոր կամ մայր եկեղեցի. որ թէպէտ Ս. Սարգսի նման քաղաքիս կեդրոնական տեղին շինուած չէ, այլ ոսովինետեւ աւելի ընտարձակ է և կաթուզիկէիւ և բարձրաբերձ կամարներով յօ-

բինուած, և վերջին քանի մի տասնեակ տարիներու մէջ կիսաւեր վիճակ ունէր Ա. Սարգիս, բնականաբար Ա. Հրեշտակապետաց անցած է մայր եկեղեցի լինելու պատիւը, որ հնովեամբ շատ հին չենք մը չէ, ինչպէս կը վկայէ քարաքանդակ արձանապուլթիւնն :

Հինուած է եկեղեցիս հայալ արդեամբք Աստուածատրոյ ուրումն և նորա ընտանեաց ի Պէտք (1408), կաֆայի արևմտեան կողմը բարձր զիրքի վերայ զրայի կողմէն բողոքովին անպանցն. ունի հայկական կալթուղիկէ ոսկէզօծ խաչի պատկուած. այլ խաչին ձեւը ազգային չէ. և համեմատութեամբ կաթուղիկէն խոշոր չէ, կը յիշեցընէ տիրող ազգային ճաշակը, մինչ մի փարքածն խաչ թերես աւելի համեմատ և վայելու կը լինէր ի ծայր կաթուղիկէին Հրեշտակապետաց: Եկեղեցւոյն ներսի կողմը վայելու է և զեղեցիկ, բարձրաբերձ և համեմատաչափ կամարներով, որոց վերայ կը հանգչի կաթուղիկէն: Վայելաշպել են և բարդուին հայկական խորանները, բեմը և զատը ժողովրդոց կամ կանանց կողմը զատ շինուած է ցած երդիքով, այլ կցուած է եկեղեցւոյն հետ. այս մասին մէջ կանգնող ժողովուրզը, երեք զրանց կամարաց մէջէն կարող է տեսնալ սրբազն պաշտամունքը: Ունէ եկեղեցիս իւր անանուն նատակը, որ պաշտպան է ընդդէմ ջերմախտի:

Առ հասարակ թիւողոսից եկեղեցիք անզարդ են, և չեն համապատասխանել մի ներազի մէջ գունուած տողերուն.

«Քէժէ քարաք ծովահայեաց,  
Եկեղեցիքը զարդարած»:

Անշուշտ այս տողերը զբողը՝ վերջին, այն է 1779ին, Հայոց ի Ղյիմէ ելնէլէն առաջ տեսել և զրիէ է կաֆայի եկեղեցիներու զարդերու մասին. և հասանական է ենթազելը որ զարդառող ժողովուրզը հետերնին տարել են բոլոր եկեղեցեաց զարդարանքը. և վերջին հարիւր տարուան միջոցին կարող չեղած եղած եկեղեցիք իրենց նախկին յարդն ու զարդը ունենալ ժողովրդոց առկատթեան պատճառաւ:

#### Ա. Կարապետ

Սրբոյն Սարգսի և սրբոց Հրեշտակապետաց եկեղեցեաց վրայ համասուս ակնարկս ընելէն վերջ, պատշաճ կը համարիմ լրելով շանցնիլ մի փաքազիք, այլ յոյժ գեղեցիկ և վայելաշպել, երբեմն հայ եկեղեցւոյ մասին, ուր այժմ Ռուսը կը պատարապեն, այն է արգելանոցի Ա. Կարապետի կամ Ա. Օյանիսի մասին:

Արգելանոցը՝ որ քաղքին արևելեան ծայրը կ'իյնայ, չորս կողմանէ պարապած, ժամանակաւ Հայոց թաղ եղած է, ուր խիտ բնակած են յլքսէրայէ աստ զաղթող ժողովուրզը. այն պատճառաւ մերթ կը պատահի որ առաջին անգամ այս տեղուցն յայց ելնող Հայը կանք կ'առնու այս կամ այն սանդուղինն, քարին, պատին և կիսաւեր մի շէնքի քով, աշքերուն զարնուելով քարաքանդակ հայ տամբեր. այլ երը կամարակապ դռներէն ներս մտնելով կարգաւ կը տեսնէ երեք

հայ եկեղեցիք, սիրուը կը տրօփէ : Այլ ես խորհուրդ կու տամբ մասնաւոր ուշադրութեամբ զննել երեք եկեղեցեաց միջինը, որ ցարդ վայելուշ ձևով կանգուն կեցած է իւր գեղեցիկ կաթուղիկէիւ . զա է Ս. Կարապետը, որոյ համար հին յիշատակարան մի կը զրուցէ :

« Ս. Օլյանէս տեղըն ձոր է ,

կաթուղիկէն յոյժ յարմար է » :

Այս տողերու մէջ յոյժ յարմար բառերը նիշտ և տեղովը գործածուած են . յիրակի այդ ձորակին մէջ, այդ համեստ և փոքրիկ եկեղեցւոյն վերայ, երկայնաձև և բոլորչի կաթուղիկէն փոքրիկի խաչիւ պանկեալ յոյժ յարմար է : Համեստ բառը արտաքին ձևոյն իրեւ տիպար կարելի է գործածել . այլ եկեղեցւոյն ներքին կողմի, մանաւանդ երեք կամարովապ դռներէն դէպ ի դասը և բեմը, պէտք է զրուցել որ շքեղ է և նյակապ, բարձր և վայելով, քանդակագործ և նաշխուն . ըստ իս, այս եկեղեցին իւր փոքրկութեամբ հանդերձ, մի չքնաղ գոհար է հայկական ճարտարապետութեան ի կաֆա : Այս գուազին գոնէն ներս մըսներով, պէտք է երկու աստիճանով վայր իշնել . երկայնաձև սեներակ մի է այդ : կամարաձև յօրինուած, և ժողովրդեան կանգնելու տեղն է . ճակաար երեք գոներ ունի գէպ ի խորան, որոնք վերռուատ ի վայր ծածկուած են գեղեցիկ քանդակներով, մանր նաշխերով . գրանց շեմերը, բարաւորները բանուած են, կամարներն ալ շատ վայելով ձև ունին : Այս կամարներէն գէպ ի խորան մանողը՝ ակամայ կը հարկադրուի զլուկը վեր վերցնել, մինչև ցտանցել պարանոցի, — ըստ բացատրութեան թուլմայի Արծունուոյ . — վասն զի բարձրաբերձ պատերը կամարակապ նեղնացով գէպ ի վեր, փոքրիկ կաթուղիկէն իրենց ուսերուն վրայ առած կ'երեւանն, որ իւր նեղ պատուհաններէն աղօտ լուսոյ ճառապայթներ կը սփռէ գէպ ի վայր : Խորանին վայելուչ գովածեին մէջ կիսով չափ յորմն ցցուած են խորաքանդակ կիսանդրիք երկուտասան առաքելոց, և ի միջին՝ քրիչն : Այս խորաքանդակ կիսարձաններուն վերայ յայտնի կ'երեւի ճաշակ քանդակագործութեան, որոնք թէպէա թանձր կրոյ ծածկուած են, սակայն և այնպէս կրին տակէն եւս կ'երեւի շափակցութիւնն և համեմատութիւն, նոյն և վայելցութիւնն . յորդ զուրկ են կողմնակի պատերուն վերայ քանդակեալ Արբոյն կարապետի և Առաւորդի խորաքանդակը, մարդաչափ արձանը, խոյր ե անարուեստ քերչաց գործ :

Այժմ մեր ազգայինք՝ Ս. Վարդսէ և Հրեշտակապետաց եկեղեցիներէ զատ՝ ունին Ս. Գեորգ և Ս. Աննա, քաղաքին հարաւային սարին վերայ, և որ տիստատեղի է, զի հոն թաղուած է ժամանակաւ լոյս-Պարոն նահատակին :

Քիչ ետքը կարգաւ պիտի նշանակեմք կաֆայի մէջ երբեմն գտնուած ազգային եկեղեցեաց անունները, որչափ ինչ յանողեցաւ մեզ գոնել՝ մի դար յառաջ զրուած ձեռապք մը : Այլ յառաջ քան զայս հետաքննական ցուցակ մէջ բերելու՝ համառօսիւ խօսինք կաթուղիկեայ . Հայոց վերափոխման Արքոյ կուսին նտիրուած եկեղեցւոյ մասին, որոյ հարիւրամեայ յոբելեանը կատարուեցաւ ի 1887 'ի 15 օգոստոսի :

Կարայարելի